ՆՈՐ-ԴԱՐ

№ 49 ՀՈՐԻՈՒՐԴ ՏԱՐԻ Հ. Ապրիլի 4 1887 Հ. Ապրիլի 4 ՀՈՐԻՈՒՐԴ ՏԱՐԻ № 49

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ դրվում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրատուն Հայկեան Տփղիս. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ինչունեղով։
Յայտարարութիւնների գնաւին 2 կ., բնկալմների համար կրկնապատիկ։

ԿԱՊԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ ԱԿԱՆ

„ՆՈՐ-ԴԱՐ“

Լրագրի բաժանորդագրութիւնը շարունակվում է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է։

Յունվարի 1-ից	10 ր. — կ.	Յուլիսի 1-ից	6 ր. — կ.
Փետրվարի 1-ից	9 » — »	Օգոստոսի 1-ից	5 » 25 »
Մարտի 1-ից	8 » 50 »	Սեպտեմբերի 1-ից	4 » 50 »
Ապրիլի 1-ից	8 » — »	Հոկտեմբերի 1-ից	3 » 50 »
Մայիսի 1-ից	7 » 25 »	Նոյեմբերի 1-ից	2 » 50 »
Յունիսի 1-ից	6 » 50 »	Դեկտեմբերի 1-ից	1 » 50 »

Եւրոպա, Թիւրքիա և այլ հեռաւոր երկիրներ տարեկան գինը՝ 30 ֆրանկ վեց ամսականը՝ 20 ֆրանկ։

Խմբագրատունը գտնվում է պօստատան առաջ, Տրօյցկի փողոցի վերայ, Սամէրա (Տրօյցա) հիկեդյաս հանդէպ, № 9.

Հայկէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործակատարների առթիւ։
Քրոնիկոն.—Լուրեր։ Մեր հեկեդյաս երկու կարեւոր պահանջները։ (Վերջ)։
Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից.—Արդարիւ։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Բանասիրական.—Խեղճ Ջամիկը (Պատկեր)։
Յայտարարութիւններ։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՌԹԻԻ

Քանիցս անգամ խօսք է եղել մեր լրագրում գործակատարների դրութեան մասին և առաջարկութիւն է եղել նոյն իսկ գործակատարի կողմից հիմնելու Թիֆլիսում մի գրադարան-ընթերցարան, որպէս զի գործակատարները դրանով համ մասնաւորապէս և բարոյապէս զարգանալու միջոց ունենան համ պարապ մնալով անտանելի կեանքի անձնատուր լինելով չդնդհնեն իրենց փողերը և առողջութիւնը, որոնց հետևանքը ծանրանում է հասարակութեան վերայ։

Արդ մինչև օրս էլ այդ կողմից ոչինչ չէ լինում և գործակատարները ապրում են և անցուդառնում են իրենց ժամանակը այնպէս, ինչպէս առաջ։

Բայց ոչ, գործակատարները առաջադիմում են, նրանք ունին ահա երկրորդ տարին է, եթէ չենք սխալվում մի կլուբ—առևտրական ժողովարան անունով։

Մեղանում կլուբ հիմնելը մի առաջադիմութիւն են համարում և քաղաքում արդէն դպրութիւն ունեցող կլուբներով չգաստանալով, նոր կլուբներ հիմնելու առանձին ձգտումն են ցոյց տալիս։ Կլուբի անդամը լսել են միզանում, բայց չեն ուզում հասկանալ, որ այն տեսակ կլուբները ինչպէս միզանում հիմնվում են, դրանք միայն գաղաբկալորութեան ծնողների զաւակներ են, կանոնադրուած չըպայմանեան հատատութիւններ են և ընտանեկան կեանքի դիրեզմանաններ։

Գործակատարները առևտրական կլուբ հատատելով ի հարկէ նրան պահպանելու միջոցներ չունին, որովհետև հարուստ և ունեոր առևտրականները արդէն անդամ են առաջուց դպրութիւն ունեցող կլուբների, ուր բաւականին կանոչ սեղաններ կան արդար և անարդար միջոցներով ձեռք բերած փողերը թղթին տալու։ Հետևարար առևտրական կլուբը սոխալուած է և արհեստական ճանապարհով մշակելու անբարոյական և գիդին կեանք յօրինելով զանազան խնջոյքներ և անվերջ դիմահանդէսներ, որպէս զի փողով կարողանալ կանդուն պահել նոյն հատատութիւնը, որ իսկապէս նրան մտաւոր և բարոյական ոչինչ օգուտ չտալով, ներհակառակը քանդում է և նրա անդամների բարքը ու վարքը ապականում։

Կաս կը լինի, որ օր առաջ փակուէին այդ տեսակ նորամուտ կլուբները և ըրջանիս գործակատարները միանալով մի հատիկ ընկերութիւն կազմէին, փոխադարձ միմիանց օգնելու հասատատէին, մի դրադարան-ընթերցարան բանային և առանց մի առանձին ծախք անելու օրուայ աշխատութիւնից վեսել բարոյապէս կազդուրուէին ընթերցանութեամբ և միմիանց հետ իրենց գործերից խորհրդակցելով աղնիւ աշխատանքի և խնայողութեան համար միջոցներ գտնէին։

Այսպիսով կ'ազնուանանար և կը բարձրանար գործակատարների դասը, մեր ընկերական կեանքում մի նոր ուժեղ գործիչ կ'առաջանար, որ անչուշտ կարող էր և պէտք է որ ծառայէր հասարակութեան և երկրի զարգացման օգտին։

Մեկ քաղաքում գործակատարները իրենց մէջ այդպիսի ընկերութիւն կազմելով, անտարակոյս այդ բարի օրինակին կը հետևեն և միւս քաղաքի գործակատարները օգուտ քաղելով դրանց փորձից։

Գործակատարների մէջ բաւականին թուով հասկացող երիտասարդներ կան, եթէ դրանք առանց ազմուկի և լրջութեամբ և համերաշութեամբ գործել ընկան, աջողութեան համար չենք կասկածում։

ՔՐՈՆԻԿՈՆ

Տօների պատճառով առաջիկայ չաբաթ «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի երկու անգամ, հինգշաբթի ապրիլի 9-ին և չաբաթ օրը ապրիլի 11-ին։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Այս տարուայ չունեցրից մինչև մարտի 25-ը Անդրկասպեան Նորանաճած քաղաքներից հրէաները ընդել են 5000-ի չափ հին դրդեր 75,000 րուբլու արժողութեամբ և ճանապարհելին դէպի արտասահման։ Այդ հին դրդերը անհամեմատ թանկ են դնում քան նորերը։

—

ԲԻԿՃՂԱՋԼՈՒԻՑ (Գառնի բատար).—Մարտի 9-10 և 11-ին այնպէս սաստիկ յուբտ արեց, որ մինչև անգամ թռչուններըը տառչում էին. մեծ նեղութիւն կայ պաչարելիների թէ մարդկանց և թէ անասունների համար Գառնիբատարի և վեղիբատարի գաւառներում. Քիչ շատ վիսի տուած պարսիկ գիւղում բաւականին ոչխարներ սատակել են. խոտի 100 խուրջը 15—20 րուբլի, ցորենի 30 պուդը 24—28 րուբլի է։ Մարտի տասն ութից մեր կողմերում եղանակը զարնանալին է և տաք. վատարանների վառելը դադարած է։

—

Պետական եկամուտը աւելացնելու համար ֆինանսների մինիստրութեան որոշած նոր միջոցների մէջ ի միջի այլոց մեծ նշանակութիւն ունի ծխախոտային հարկը։ Այդ մասին առաջարկութիւն է եղել պետական խորհրդին, և այս տարուայ գարնան պիտի քննուի դա։ Ինչպէս տեսնում են մայրաքաղաքի թերթերը, ամենից աւելի հարկերը պիտի բարձրացնեն ծխողչայի (ռուսական ծխախոտ) վերայ, այսինքն երեք անգամ աւելի, քան այժմու հարկը. իսկ հասարակ ծխախոտի վերայ հարկը պիտի բարձրացնեն 3-րդ տեսակի համար—50 տոկոս, իսկ նոյն ծխախոտի վերայ ա. և բ. տեսակների, նոյնպէս և ա. տեսակի պապիրոսի վերայ պիտի բարձրացնեն $^1/_3$ մասով։ Նախատեսով ամենաբիչ հարկի պիտի ենթարկուին բ. տեսակի պապիրոսները։ Ծխախոտի հարկի նոր բարձրացնելուց 8 միլիոն րուբլի օգուտ են սպասում։

—

ՍԵՐԱԽՍԻՑ (Անդրկասպեան երկիր).—Փետրվարի 10-ից մինչև օրս, այսինքն մինչև մարտի 15-ը՝ էլ ձիւն

Միայն այն միտքը, թէ իւր որբերը անօգնական և քաղցած են անցկացնում իրենց օրերը և ինքը աչնչով կարող չէ ազատել այդ անմեղներին ճակատագրի դառնութիւնից, նրան հանգնում էին յուսահատութեան դադաթնակէտին։ Միայն երբեմնապէս լոյս էր, որ իւր աղօթ ճարատագրներով փարատում էր նրա սրտի վերայ նստած ծանրութիւնը. «Գոյէ դեռ մի օգնութեան ձեռք հասնի իմ այս որբերը», մտածում էր նա։

Բայց ահա անցան երկու օր էլ. քաղցածութիւնից տանջվում էր անբաղդ ընտանիքը և դեռ ոչ ոք չէիչեց այդ բաղդաղուրկ թշուառներին և այսօր բացի հիւանդից, նրա որբերն էլ անօթի են. այսօր Ջամիկ թաթախման օրն է, քաղաքը կարծես կենդանութիւն է տարել, ամեն մինը ապատամ է սրտի բարախմամբ երեկոեան զանգակներին, մանուկները կարմիր ձուկերը ձեռներին փողոցները լցնում են իրենց ուրախ ձայներով, մարդիկ իրենց տան պատրաստութիւնները չափում են լրացնելու, կանայք աշխատում էին չուառով պատրաստելու երեկոեան ընթրիքի համար կերակուրները, որ կարողանան դիմել եկեղեցի, բայց ոչ մինի մարդին չէր գալիս խեղճ ընտանիքը։

Անբաղդ որբիկները դուրս են գալիս փողոց—ոչ ոք չէ նայում նրանց վերայ, ոչ ոք չէ կարեկցում նրանց ցաւերին, բոլորը զբաղմած են նրանց ճակատին «որբ» և «աղքատ» բառերը, նոյն իսկ երեխայքը արհամարհանքով հեռանում են նրանցից։ Որբիկները հալածած զատն ճակատագրից, արտասուալի աչքերով վերադառնում են տուն և պաչարում իրենց հիւանդ մորը։

—Մայրիկ, անօթի եմ...

—Մայրիկ, այսօր խնոամ է, ինչ ենք ուտելու...

—Մայրիկ, հաց տուր...

Միմիանց հետևից որբերը գիմում են իրենց մօրը։

Թշուառ կնոջ որդիկրանց աղիողորմ և կծկտուր խօսքերը մի մի նոր վէրքեր էին բաց անում նրա, արդէն մերթ ի մահ վիրաւորուած սրտում։

Նա հաւաքեց իւր վերջին ոյժերը, բարձրացաւ և նստաւ իւր չոր անկողնում, և մի տխուր հայեացք ձգեց իւր որբերի վերայ։

—Անբաղդ զաւակներս... հաղիւ լսելի ձայնով ասաց նա և այլ ևս չկարողացաւ չարունակել և մի քանի րոպէ լուեց, արտասուքը թափվում էր նրա խորշոմած արտերից ցած. նա մի խորին հառաչանք արձակելով չարունակեց. «Միթէ ձեզ անմեղներիդ ևս վիճակուած է դառն կեանք այս աշխարհում, բաւական չէ արդեօք այսքան ճակատագրի դառնութիւնը... ձեր հայրը մեռաւ դառն խեղճութեան մէջ, մեռնում է և ձեր մայրը... դուք ևս լինելու էք զոհ այդ խեղճութեան, չկայ արդեօք մինը, որ գոնէ ձեզ, ազատէր այդ չարաչար մահից... Նա լուեց և ընկաւ իւր մտածմունքի մէջ։ Նա իւր թոյլ գլուխը պահել էր ձեռների մէջ, իսկ արտասուքը անդադար թափվում էր ցած... Նա երկար մնաց այդ դրութեան մէջ և սթափեցաւ այն ժամ

ՍԱՆՈՒԿԻ –Ջ–

Ա. Ա. Ղազարյանի ֆոտոգրաֆիական արվեստանոցում Ղարաբաղի 15° ձմեռային տեսարանների ցուցադրությունը ներկայացնում է ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային ամենագեղատեսիլ վայրերը։ Ցուցադրված են ավելի քան 600-ը լուսանկարներ, որոնք ստացվել են ինչպես ֆոտոխցիկի, այնպես էլ կինոխցիկի միջոցով։ Ցուցադրության մեջ մտնող լուսանկարներից շատերը ստացվել են ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային պայմաններում։ Ցուցադրության մեջ մտնող լուսանկարներից շատերը ստացվել են ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային պայմաններում։

—

«Ժամանակ»-ի թղթակիցը հետևյալ հետաքրքրական տեղեկությունները հաղորդում է Ղարաբաղի ձմեռային գեղեցկությունների մասին։

«Ժամանակ»-ի թղթակիցը հետևյալ հետաքրքրական տեղեկությունները հաղորդում է Ղարաբաղի ձմեռային գեղեցկությունների մասին։

—

Ղարաբաղի ձմեռային գեղեցկությունները

Ղարաբաղի ձմեռային գեղեցկությունները

— Նիկոլ Աղբալյանովի մոտ գնալիքս ասում էի «Ծիրք Եվրո»-ի սոսկ փոխարեն, որովհետև այդ ժամանակ ես դեռ չգիտեի, որ Ալեքսանդրապոլում կա մի ուրիշ ընկերություն ևս, որ նույնպես «Ծիրք Եվրո» է կոչվում։ Ես գնում էի Նիկոլի մոտ, որովհետև նա ինձ հրավիրել էր իր մոտ ճաշելու։ Ես ուզում էի նրանից իմանալ, թե ինչ է նշանակում «Ծիրք Եվրո»։ Ես գնում էի նաև նրա համար, որ ինձ հետաքրքրում էր իմանալ, թե ինչ է նշանակում «Ծիրք Եվրո»։ Ես գնում էի նաև նրա համար, որ ինձ հետաքրքրում էր իմանալ, թե ինչ է նշանակում «Ծիրք Եվրո»։

—

թէ ինչ կերպ և ինչ միջոցներով պէտք է կանոնաւորել մեր եկեղեցիների և դպրոցների երգեցողութիւնը։

Եղիչէ Երզնկեանց

Թիֆլիս, 15 մարտի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

ԱՐԴԱՐԻ, 7 մարտի։ Կարդալով «Նոր-Դար»ում Կ. Կ. Մելիք-Շահնազարեանցի ընդարձակ յօդուածները «Ոգելից ըմպելիների վնասակարութիւնը» (տես 9—10 համարները) մարդ ակամայ զղում է թէ՝ որքան ճշմարտութիւններ է լստնում յօդուածի հեղինակը։ Ճշմարիտ որ մօտիկ անցեալում երիտասարդը իրաւունք չունէր, ուրիշ խօսքով մի մեծ ամօթ էր նրա համար մինչև անգամ չլիմոնքներին կպցնել օղիի բաժակը. իսկ այժմ միզանում այդ ընդհանրացել է, ամենայն մարդ, լինի նա պատանի կամ երիտասարդ, համում է այդ, չհասկանալով նրա վնասակար կողմերը, չհասկանալով նրա ապագալի համար պատրաստած տանջանքները։ Այո, հետզ հետէ չեն մեզանից այն տարիները երբ «չիբուխի» բառը մեծ ամօթանք էր բերում ամենին, երբ մարդիկ առում էին «Ամեն տեսակ արհեստից վատագոյնը այդ է»։ Մինչև անգամ չէին ուզում որ չիբուխին հասարակական գործերում տեղ բռնէ, արտաքսում էին նրան այդպիսի տեղերից։ Ամօթ էր այն մարդու համար, որ մինչև անգամ չիբուխը առնը կը դնար։ Իսկ այժմ համարձակ կարող ենք ասել, որ Արդաբիլի հայ հասարակութեանը կիսով չափ չիբուխ է։ Այժմ ամենքն էլ սկսած պատանիից մինչև ծերը խառում են, չէ լինում մի տեղ, որ օղին գործ չածուի։ Զենք սրխալուիլ, թէ ասենք, որ կանանց օղին մարդկանցից աւելի են սիրում, որքան կրեների և սրտեզութիւնների պատճառ է լինում այդ օղին։ Պատահում է որ այստեղի հայերը չատ անգամ խրմելով զոհում են ընդհանուրը անձնականին։ Սովորելով հայից այդ սովորութիւնը և պարսիկը, որ մօտ անցեալում փղոցից անցնելիս մի վերստ հեռու էր փախչում հայից և «աստաֆիրուլայ» կոչում հային պիղծ համարելով, այժմ օղի է գործածում և հանդիստ կերպով նստում հայ չիբուխատանը, լաւ ուտել խմելուց յետոյ կրսիւ է անում իր ընկերոջ հետ, չատ անգամ նրան սրի վէրքեր հասցնելով։ Պարզ կարող ենք ասել, որ Արդաբիլի հայ հասարակութեան իդէալը այդ օղին է, որին նրանք ջրի նման խմում են։ Մի քանի հայ երիտասարդներ, որոնք կազմում են մեր քաղաքի հայ հասարակութեան ինտելիգէնտ դասակարգը, զուրկ չեն նոյնպէս օղի գործածելու սովորութիւնից։

Մեր կեանքի ամենավնասակար կողմերից մինն էլ կանանց դատարկապօրտութիւնն է։

Օր չէ անցնում որ մեր գեղեցիկ սեռին պատկանողների մէջ չծագէ որև է կռիւ։ Կռիւ, բամբասանք, տախտութիւն, քամութիւն, հալմանք պակաս չեն նրանց մէջից և այդ բոլորը պատահում է չատ անգամ նոյն իսկ եկեղեցու մէջ, առաւելապէս ս. պահոց օրերում, որպէս խմբովին հաւաքվում են։ Նրանք փոխանակ իրենց մեղքերը քաւելու, բաւական կուչ կուչ վիշոյներ են տալիս և ժամերգութիւնը խանգարում, որ չնորհով մի բաւական զարդացած ախրացուի բաւական աջողակ երգվում է։

Զկալ մինը Արդաբիլում, որ այդ անկարգութիւնների առաջն առնէ, ժողովորդը պահանջէ։

Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՒԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt»-ը հաղորդում է, որ բոլղարները մտադիր են Սուլթանին միացնել Բոլղարիայի թագաւոր հրատարակելու և Բոլղարիայի ու Թիւրքիայի մէջ միութիւն հաստատելու։

—Իչխան Ալէքսանդրը Սաֆանովից չնորհակալ է եղել՝ հարենասիրական միութիւններ հաստատելուն համար Բոլղարիայի մէջ։

—Սարասբուրգում մինիստրութիւնը որոշել է բոլոր ֆրանսիացիներին էլ ենթարկել այն օրէնքին, որով իւրաքանչիւր ոք պատկանում է ֆրանսիական բանակին կամ նրա հետ չարաբերութեան մէջ է, պէտք է առանձին թղթատութիւն ստանայ Լօթարինգիայում մնալու։

—Բոլղարական կառավարութիւնը մի ընդարձակ յայտարիր է տարել Սոֆիայից և ըստ երևոյթին դոհ է մնացել։

—«Times» հերքում է այն լուրը, որ իբրև թէ Աւստրիայի, Բաւիերիայի և Սերբիայի մէջ դաշնակցութիւն է կայացել։

—«Рус. Курь.»-ը լսել է, որ ռուսական կառավարութիւնը առանձին չրջաբերական է պատրաստել վարնայում չարաբեր չնոտող ամրութիւններին, և նրանց էլ Կրուպպի թնդանօթներով մատակարարելու դէմ։

—«Neue Freie Presse»-ին Սոֆիայից հաղորդում են, որ իշ. Ալէքսանդրը իրեն Բոլղարիայի կողմից եղած առաջարկութեան, որ կրկին իշխանական դահը բազմի, դրաժարուել է հանուանապէս։

—Սոպլովին բանձնարարած է բոլղարական դահը առաջարկել Կօբուրգի Ֆիլիպենդ հերցօգին։

—Աւստրիական կառավարութիւնը մտադիր է Կօնգօն (Աֆրիկա) ազատ գաւառ չինելու։

—Թիւրքիան նոր չրջաբերական է պատրաստում բոլղարական խնդրի մասին։

—Լօնդօնում այս օրերս փորձ են արել չինական կառավարութեան համար չինած մի ականակիր նաւի. փորձը ցոյց տուեց, որ պա իւր տեսակի մէջ գերազանցում է աշխարհիս մէջ եղած ականակիրները։

—Այս տարուայ յունիսի 18-ին արդէն կ'սկսին փորել Հիւսիսային ծովը Բալթիկ ծովի հետ միացնող ջրանցքը։

—1886-ի յունվարի 1-ին ռուսական բանակը բաղկացած էր՝ գիներալ, չտաբ և օրիր սպաներ—30, 655 հոգի էին, իսկ տոռին ասիճանաւորներ—824,762 հոգի։ Այդ թուից հետևեակ էին, տոր ասիճանաւորներից 607, 647 հոգի, հեծելազօրի մէջ—77,140 հոգի, ռմբաձիգ գնդի մէջ—114,325 հոգի և ինժէներական գնդում—25, 656 հոգի։ Ֆիննական զօրքը, որ վերցիչեալ թուի մէջ չէ մտել, էին—175 սպայ և 4,628 հոգի տոռին ասիճանաւորներ։ Բացի դրանցից, զինաւոր չտաբի հաչվումն էին 765 գիներալներ և չտաբ ու օրիր սպաներ, որոնք դանազան պաչտօններ են վարում քաղաքային մասում և 19 գիներալներ և չտաբ ու օրիր սպաներ, որ անգործ են մնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խոր զգացմունք.—Վիլհելմ կայսրի 90 ամեակի տօնախմբութեան երեկոյին, Բերլինի ցնտ ընկած փողոցներից միում, մի աղքատ կօշկակարի իանութի պատուհանն էլ լուսաւորուած էր, ինչպէս բոլոր քաղաքը. միայն աղքատ կօշկակարի աղքատիկ իանութը լուսաւորուած էր աղքատ կերպով։ Պատուհանի առաջ գրած էր միայն մի մոմ, որի ներքևի կողմից գրուած էր հետևեալ չորս տող տաղնաւորը,

Du einz'ger Kaiser zürne nicht!
Ich habe nur ein einzig Licht!
Doch fiel dereinst bei Belfort schon
Zu Tod getroff'n mein einz'ger Sohn!

(Մի նեղանալ, մեր միակ կայսր, որ լոկ մի ճրագ եմ վառել. Բէլֆորի մօտ, մահացու վէրք ստացաւ, ընկաւ իմ մինաճար որդիս)։

* * *

Ծերութեան ստատիստիկան.—Գերմանական կայսրի ծննդեան 90 ամեակի առթիւ Բերլինում հրատարակուող «Statist. Correspon.»-ը ցոյց է տալիս Պրուսիայում 90 տարեկանից անց անձերի տատիստիկան։ Այդ տատիստիկայից երևում է, որ Պրուսիայում 5,600-ից աւելի անձեր կան, որոնց տարիքը 90-ից անց է, որոնցից 200-ը կայսրից գէթ 10 տարեկանով բարձր են։ Բոլոր գատաններում գտնվում են 90—95 տարեկաններ բաւական մեծ քանակութեամբ. մեծ տարիքաւորները մանաւանդ աւելի պատահում են Պոզնանում, Սիլեզիայում, Արեւելեան և Արեւմտեան Պրուսիայում։

* * *

Լրագրական տատիստիկա.—Մի լրագիր գալիս է Միացեալ Նահանգներում . . 4,473 հոգու վերայ
Զուիցերիայում . . 5,075 » »
Դանիայում . . . . 6,022 » »
Բելգիայում . . . . 6,659 » »
Ֆրանսիայում . . . 8,642 » »
Գերմանիայում . . 9,474 » »
Անգլիայում . . . 11,409 » »
Շվէդիայում . . . 13,120 » »
Աւստրիայում . . 14,832 » »
Ունգարիայում . 24,343 » »
Ռուսիայում . . 109,611 » »

Իսկ հայերին միայն Ռուսիայում հաշուելով մի միլիոն, մի պարբերական թերթը (այդպէս հաշուելով և ամսագիր և չաբաթաթերթեր և այլն) գալիս է 166,666 հոգու վերայ։

* * *

Յոդնած գիշերաներ.—Ամերիկայի պարզ օրերից մինն էր, երկու ժրաջան գիւղացի աչխատում էին հասկերից արտում, որի կեդրոնում մի հատարմամ կաղնի էր բուսած։ Նրանք անդադար հունձ էին անում արևի կիզիչ ճառագայթների տակ, ուչադրութիւն չդարձնելով ճակատից առուակի նման ծորող քրտընքի կաթիլներին։ Սակայն խորչակը ադին և խանձացած մչակները թողին աչխատանքը ու ուղղուեցան դէպի վիթխարի կաղնին, նրա սուռերում հանգրստանալու համար։ Նրանք քնել չանկանալով, գլուխները միմեանց նեցուկ առին, և սկսան խոսիլ։ Զգիտեմ որտեղից, չանկարծ օդում թռչելով մի մոծակ, եկաւ ուժգին խայթից նրանցից մինի գլուխը։ Ներչած գիշերակը փոխանակ իրեն՝ սկսաւ գիմացի ընկերոջ գլուխը քորել, բայց տեսնելով, որ այդ չէ օգնում, ոկսեց սուր եղունգներով ուժգին քորել, սակայն որքան եղաւ նրա զարմանքը, երբ ընկերը վեր կենալով՝ գոռաց բարձր ձայնով. «Տե՛, Մարտիրոս, էաքան կը քրեն գլուխս, գանա ոչլոտա»։

—Աբա չան, էտ քու գլուխն ա էլել, —պատասխանեց նա քնաթաթախ, մերթ ընդ մերթ աչքերը բանալով, —քոս, իմ գլուխը ոնր ա»...

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐԻ»

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԼՕՆԴՕՆ. 1 Ապրիլ։ Թէ Հրանից «Րէյտերի գործակալութեան հեռագրում են, որ ռուսական նոր դեսպանի իշ. Դոլգօրուկովի ընդունելութեան համար մեծ պատրաստութիւններ են տեսնվում, որպիսին դեռ ոչ մի դեսպանի համար չէ եղել։

ԼՕՆԴՕՆ. «Րէյտերի գործակալութեան» խօսքերով աղտնական սահմանի խնդրում Անգլիան պատրաստ է Թուսիայի պահանջին համաձայն Ամու-Դարիայի մօտերքի հողերի մասը, որ այժմ աւզանների ձեռին է, զիջելու Ռուսիային, բայց պայման է դնում, որ աւզաններին մի ուրիշ տեղ բաւականութիւն տան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

2 Ապրիլի

Լօնդօն 21$^{7}/_{32}$, 21$^{1}/_{4}$.
Համբուրգ 180 180$^{1}/_{2}$.
Պարիզ 224.
Պօլուիմպերիալ 9 ր. 27 կ. սակ.
Մաքս. կուպոն. 178$^{1}/_{4}$ր. — կ. սակ.
Արծաթ . . . . 1 ր. 37 կ. սակ.
Բօրսային գիս. 4$^{1}/_{2}$ և 6%
Պետական. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 99$^{3}/_{4}$ ր. — կ. գն.
2-րդ » . . 99$^{1}/_{4}$ ր. — կ. սակ.
3-րդ » . . 98 ր. 87 կ. գն.
4-րդ » . . 98 ր. 87 կ. գն.
5-րդ » . . 99 ր. 12 կ. սակ.
6-րդ » . . —
100 և 1000 արևելեան վոխառութեան 5% տոմսեր
1-ին շրջանի 99$^{1}/_{2}$ ր. — կ. սակ.
2-րդ » . . 99$^{3}/_{4}$ ր. — կ. սակ.
3-րդ » . . 99$^{3}/_{4}$ ր. — կ. սակ.
Առաջին ներքին վոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . 252 ր. — սակ.
2-րդ . . . . 233 ր. — սակ.
5$^{1}/_{2}$% ընծաեր 102$^{1}/_{4}$ ր. — սակ.
Ոսկէ ընծաեր. 194 ր. — սակ.
Թիֆ. քաղաք. վարկի ընկեր.
օբլիգ. . . . . — ր. ծախ.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը բաւական հաստատ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 3 Ապրիլի։ Լրագիրները իրրև լուր հաղորդում են, որ տարուայ առաջին կէսի ընթացքում մտադրութիւն կայ ներմուծուղ ծխախոտի վերայ 1 ր. 30 կոպէկ մաքսային հարկ դնելու, իսկ ներմուծուղ շաքարի հարկը բարձրացնելու 3 ր. 20 կոպէկ. նոյնպէս և երկրի ներսը պատրաստուղ առաջին և երկրորդ տեսակ ծխախոտի ակցիզ 33% աւելացնելու։

ԼՕՆԴՕՆ. Անգլիական բանկը իւր գիսկօնտը 3-ից 2$^{1}/_{2}$%-ի իջեցրեց։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

գնացքների երթևեկութիւնը «Թիֆլիս» կայարանում։

—

Բաթում գնում է պօստ. առաւ. 8 ժ. 49 վ.
Բաթումից գալիս է ,, երեկ. 10 ժ. 15 վ.
Բագու գնում է ,, երեկ. 10 ժ. 46 վ.
Բագուից գալիս է ,, առաւ. 8 ժ. 6 վ.
Թիֆլիսից Սուրամ գնում է ապրանքակիր-մարդ. ակիր գնացքը կեր. 3 ժ. 21 վ.
Սուրամից գալիս է ապր. մարդ. գնացք առաւ. . . . . 8 ժ. 24 վ.
Թիֆլիսից խառն գն. առաւօտ. 9 ժ. 30 վ.
Ադստաֆայից ,, ,, երեկոյեան 9 ժ. 10 վ.

—

Մինչև 1887 թ. մայիսի 10-ը կանոնաւոր պօստային երթևեկութիւն
Հինգ հողու տեղ ունեցող կառքով. գիշերանոց հայ Մչեթում։
Թիֆլիսից և Վլադիկավկասից գալս են գալիս առաւօտեան . . . . . 8 ժ.
Թիֆլիս և Վլադիկավ. գալիս են երեկ. 8 ժ.
Վեց հողու տեղ ունեցող կառքով առանց գիշերելու տեղի։
Թիֆլիսից և Վլադիկավկասից գալս են գալիս կեսրևը . . . . . 4 ժ.
Թիֆլիս և Վլադիկավկաս գալիս են երեկոյեան . . . . . 8 ժ.

Խնդրվում է այն յարգելի անձինքներից, որոնց մօտ գտնվում են

ՎԱՌՎԱՌԻԷՅԻ

Բաժանորդագիրերը, բարեհաճեն մինչև ապրիլի 10-ը ուղարկել Ղարս, Պօղոս Թօմինիկեանցին։

2—2

ԿՕՍՄԵՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

պատրաստելն ու վաճառելը, որպէս իրենց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր չպարունակող, թոյլ է տրուած վաճառականութեան ընդհանուր հիմքի վերայ։

Լաւագոյն Օդեկոլն ձմերի և գիմերի կաչին փափագնում է. գինը 2 ր. ճանապարհածախսը 50 կոպէկ. Գէմ Բալզամն գիմերը արևակէզ արիւնոյց պահպանում է, ներգործում է և գիմքն ու չրթունքները քամուց աղտեղութեան չենթարկուելու դէմ։ Մանօնքի անուշահոտ օճառ, առատ փրփուր է տալիս. գ. 60 կ., $^{1}/_{2}$ գիւժինից պակաս չէ ուղարկվում։ Օդեկոլոնեան խառնուածքի (պուդրա), երևոյթ չէ թափվում, գ. 2 ր. ճան. 50 կ., փոշի a Bauté immortelle, անուչահոտ, բրնձային, ամենաարագ, գ. 1 ր. 50 կ., ճան. 50 կոպէկ։ Տօթոյին – մազերը ամրացնելու օճանելի իւղ (պոմադա). Գ. 1 ր. 50 կ., ճան. 50 կոպէկ։ Անէկդէնեան ջուր—մազերը մաքրող, գ. 1 ր. ճան. 50 կոպէկ։

Բալզամ Կօլօրատօ, բուսային հիւթ, ոչնչացնում է թիթիռկ, ատոխան առատոխան ոչնչացնում է սպիտակ մազը։ Գ. 4 ր., ճան. 1 րուբլի։

Վազելէինեան խոպանի, նոյն գործածութեան համար։ Գ. 5 ր., ճան. 1 րուբլի։ Այս առարկաները ծախվում են Պետերբուրգում Բուզանովի մագազինում և Ս. Պ. Բ. Քիմիական լաբօրատօրիայում։ Մոսկվայում—Բոխարի մօտ, Կուզնեցկի կամուրջ. Օդեսայում—Հելգերի մօտ. Խարկովում—Կալչիի, երբեմն Ավդոի և Գրուչեվսկու մօտ և Վիլենսկում—Ռուսաց Ընկերութեան մօտ։ Օտարաքաղաքացիների համար վարչավայում Գօրժանսկու և Ռուսիայում բոլոր գեղավաճառանոցներում և բարիչ նիւթեր վաճառողների մօտ։

Պահանջել, որ հինգ գունանի վաթեմների վերայի տարապրութիւնը լինի Գօրժանսկի և ոչ Վօրժանսկի, վերջինս չնչին է և չաստաիլ։

(Ц. 8487) 25—1

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԻԱՆՕՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՑԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Սիօնի փողոց, տուն Անանօվի)

Վաճառում է և գնում է տոկոսաբեր թղթեր և փոխ է տալիս նրանց գրաւականով

ԽԱՂԱՏՈՄՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԷՆ

ՄԻՆՉԵՒ 210 ՐՈՒԲԼԻ

Փոխագրութիւններ է անում Մօսկվա, Օդեսա, Բաքու, Բաթում և արտասահմանի զանազան քաղաքները։

14—6

Дозволено цензурою Тифлисъ 3-го Апрѣля 1887 г. Տպարան Մ. Գ. Գօհարեանցի Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41